



## Մեթադոնային փոխարինող բուժում ստացող անձանց պայմանական վաղակետ ազատման իրավունքը

վերլուծություն

### Բովանդակություն

1. Մեկնաբանվող խնդիրը .....	2
2. Իրավական հիմք .....	2
Ներպետական իրավակարգավորումները .....	2
Միջազգային իրավակարգավորումները .....	5
3. Վերլուծություն .....	6
Մեթադոնային փոխարինող բուժում .....	6
Ռիսկային խումբ հասկացության սահմանում .....	7
Ռիսկային խմբում ներառված լինելու հիմքով մեթադոնային բուժում ստացող անձանց իրավունքների սահմանափակումը .....	7
3. Եզրակացություն .....	11



## 1. Մեկնաբանվող խնդիրը

1. Մեթադոնային բուժում ստացող դատապարտյալները չեն կարող պայմանական վաղակետ ազատվել՝ ռիսկային խմբում ներառված լինելու պատճառով:

## 2. Իրավական հիմք

### Ներպետական իրավակարգավորումները

2. ՀՀ Սահմանադրության 14.1.-րդ հոդվածի համաձայն՝  
*«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:»*
3. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի (Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը) 1-ին մասի համաձայն՝  
*«1. Ազատագրված (...) ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: »*
4. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մաս՝  
*«2. Պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանն անձի վրա կարող է դնել սույն օրենսգրքի 70-րդ հոդվածի հիմնված մասով նախատեսված պարտականությունները, որոնք անձը պետք է կատարի պատժի չկրած մասի ընթացքում:»*
5. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մաս՝  
*«6. Եթե պատժի չկրած մասի ընթացքում դատապարտյալը՝  
  
1) չարամտորեն խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, ապա դատարանը, դատապարտյալի*



վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին.

2) կատարում է անզգույշ հանցանք, ապա պայմանական վաղաժամկետ ազատումը պահպանելու կամ վերացնելու հարցը լուծում է դատարանը.

3) կատարում է դիտավորյալ հանցանք, ապա դատարանը նրա նկատմամբ պատիժ է նշանակում սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում, եթե կատարվել է անզգույշ հանցանք, և դատարանը վերացնում է պայմանական վաղաժամկետ ազատումը:»

6. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«5. Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել (...) թմրամոլությունից, (...): Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք:»

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատում (...) դատարանը կիրառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով: (...) »

8. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝

«Պատժից ազատելու հիմքերն են՝

(...)

3) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը:»

9. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը:»

10. ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ հաստատված



«Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման» Կարգով սահմանվում են որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգն ու պայմանները, այդ նպատակով վարչական հանձնաժողով ստեղծելը, դրա կազմն ու գործունեությունը, ինչպես նաև դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման ընթացակարգը

11. ՀՀ առողջապահության նախարարի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1440-Ա հրամանով հաստատվել է «Օփիոիդային թմրամոլության մեթադոնային բուժման կլինիկական ուղեցույցը»

12. ՀՀ ԱՆ 30 մայիսի 2008թ. թիվ 44 հրամանով հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» Կարգի 12-րդ գլխի (Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների առանձնահատկությունները կալանավորված անձանց և դատապարտյալներին ռիսկային հաշվառման վերցնելիս և հաշվառումից հանելիս) 66-րդ կետի համաձայն՝

*«66. Ռիսկային են համարվում այն (...) դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշումներ և պատիժը կրելուց հետո կարող են վտանգավոր լինել հանրության համար:»*

13. Նույն կարգի 68-րդ կետի համաձայն՝

*«68. (...) դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա են (...) **թմրամիջոցների**, ազրեսիվության և կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների հակումներից մեկը» (...)*

14. Նույն կարգի 68-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

*«3) Որպես ալկոհոլի, **թմրանյութերի** նկատմամբ հակում ունեցող հաշվառելու հիմք են*



հանդիսանում՝

բ. բժշկական եզրակացությունը, (...):»

15. Նույն կարգի 72-րդ կետի համաձայն՝

«(...) թմրամիջոցների օգտագործման հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել համապատասխան բուժում ստանալուց հետո 1 տարվա ընթացքում, ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում:»

### Միջազգային իրավակարգավորումները

16. ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի թիվ 18-րդ մեկնաբանություն.

«խտրականությունը՝ անձի, ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծնունդի կամ այլ կարգավիճակի հիմքով տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն է, որի նպատակն է բացառել կամ վնասել բոլոր անձանց կողմից մյուսների հետ հավասար հիմքերով բոլոր իրավունքների և ազատությունների ճանաչումը, իրացումը և իրականացումը:»

17. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն.

«14. Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:»

18. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգտվելը պետք է ապահովվի առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության:»



19. ԵՆ Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը «Եվրոպական բանտային կանոնների մասին».

*«1. Ազատությունից զրկված բոլոր անձանց հետ վերաբերելիս պետք է հարգել նրանց մարդու իրավունքները:*

*2. Ազատությունից զրկված անձինք պահպանում են իրենց այն բոլոր իրավունքները, որոնցից նրանց օրինականորեն չեն զրկել նրանց դատապարտելու կամ կալանավորելու մասին որոշմամբ:»*

20. ԵՆ Նախարարների կոմիտեի թիվ (2003)22 հանձնարարականը «Պայմանական վաղալեւտ ազատման մասին»

*«Պայմանական վաղաժամկետ ազատումը հանդիսանում է կրկնահանցագործությունների կանխման ամենաարդյունավետ և կառուցողական միջոցներից մեկը, որով ապահովվում է նրանց վերաինտեգրումը հասարակություն:*

### 3. Վերլուծություն

#### Մեթադոնային փոխարինող բուժում

21. 2009 թվականից ՀՀ-ում մեկնարկեց «Մեթադոնային փոխարինող բուժման տրամադրում ափիոնատիպ նյութերից կախվածություն ունեցող հիվանդներին» ծրագիրը<sup>1</sup>, որը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված «Օփիոիդային թմրամոլության մեթադոնային բուժման կլինիկական ուղեցույցի» համաձայն:

22. Բազմաթիվ երկրներում անցկացված հետազոտությունները փաստում են, որ մեթադոնային փոխարինող բուժման (հետայսու՝ ՄՓԲ) արդյունքում հիվանդների մոտ նկատվում են հետևյալ դրական արդյունքները.

- վերացվում կամ մեղմացվում է ապօրինի օփիոիդների (այդ թվում՝ հերոինի) նկատմամբ հիվանդագին հակումը և դրանց չարաշահումը,
- նվազում է ապօրինի օփիոիդների առաջացրած առողջական և սոցիալական հետևանքները,
- նվազում է ՄԻԱՎ-ի ռիսկային վարքագիծն ու վարակի հավանականությունը<sup>2</sup>,

<sup>1</sup> Տե՛ս «Մեթադոնային փոխարինող բուժումը: Առանձնահատկությունները ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում» հետազոտություն <http://pmg.am/wp-content/uploads/2015/03/%D5%84%D5%A5%D5%A9%D5%A1%D5%A4%D5%B8%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D6%83%D5%B8%D5%AD%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6%D5%B8%D5%B2%D5%A2%D5%B8%D6%82%D5%AA%D5%B8%D6%82%D5%B4.pdf>

<sup>2</sup> Տե՛ս «Эффективность метадоновой терапии и снижение риска заражения ВИЧ среди лиц, употребляющих инъекционные психоактивные вещества» [http://rylkov-fond.org/cd/effectivnost\\_zt/011.pdf](http://rylkov-fond.org/cd/effectivnost_zt/011.pdf)



- Բարելավվում է պացիենտների առողջական վիճակը և կյանքի որակը, ինչպես նաև բարելավվում է հոգեւոցիալական կենսագործունեության մակարդակը:

23. Մեթադոնի կլինիկական կիրառումը պայմանավորված է այս դեղանյութի գլխուղեղում ավիոնային՝ ընկալիչները դրդելու և նույն ընկալիչների վրա այլ ավիոնոյդների ազդեցությունը կանխելու ունակությամբ:
24. ՄՓԲ շնորհիվ հնարավոր է դառնում օփիատներից կախվածությամբ տառապող պացիենտներին արդյունավետ կերպով տեղափոխել ապօրինի թմրամիջոցներից (օփիատներ, հերոին) կախվածությունից դեպի օրինական թմրամիջոցից (մեթադոն) կախվածության դաշտ՝ աստիճանաբար նվազեցնելով մեթադոնի դեղաչափը:
25. Մեթադոնով ընդհանուր առողջական վիճակի կայունացումից հետո պացիենտները հնարավորություն են ստանում կազմակերպել կամ վերակազմակերպել իրենց առօրյա կյանքը և սրացումների կանխարգելման լայնածավալ ծրագրերի շնորհիվ հետագայում՝ նաև ազատվել մեթադոնից:
26. Միննույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ մեթադոնային բուժումը ներկայումս գործում է թե՛ քրեակատարողական հիմնարկներում, թե՛ քրեակատարողական հիմնարկներից դուրս՝ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում, «Վանաձորի հոգեկայարդարանական դիսպանսեր» ՓԲԸ-ում, «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում:

### **Ռիսկային խումբ հասկացության սահմանում**

27. Համաձայն 2008թ. մայիսի 30-ի ՀՀ արդարադատության նախարարի թիվ 44 հրամանով հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» Կարգի 12-րդ գլխի 68-րդ կետի՝ (...) դատապարտյալները հաշվառման են վերցվում **որպես ռիսկային**, եթե նրանց մոտ առկա են (...) **թմրամիջոցների (...) հակումներից մեկը**: 68-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ (...) թմրանյութերի նկատմամբ հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝ դատավճռով տրված բժշկական եզրակացությունը (...):

### **Ռիսկային խմբում ներառված լինելու հիմքով մեթադոնային բուժում ստացող անձանց իրավունքների սահմանափակումը**

28. Դեռևս 2014թ. հուլիսին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել էր ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին պարզելու համար, թե 2012 թվականից ի վեր մեթադոն ստանալու ժամանակահատվածում դատապարտյալներից քանիսի վերաբերյալ է պատիժը կատարող



վարչակազմը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացրելու վերաբերյալ որոշում ընդունել և Անկախ հանձնաժողովի կողմից քանի դատապարտյալի վերաբերյալ է կայացվել այն հավանության արժանացնելու մասին որոշում: Ի պատասխան հարցմանը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը հայտնել է, որ Անկախ հանձնաժողովի քննարկմանը մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված դատապարտյալների պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ որևէ միջնորդություն չի ներկայացվել:

29. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածը ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության հանրաճանաչ սկզբունքը: Օրենքի առջև հավասարության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իբրև ձևական հավասարություն, այլև իբրև իրավունքների և ազատությունների օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշ: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին և պահանջում է ցանկացած օրենքում մարդկանց իրավունքների և պարտականությունների հետ կապված խնդիրները լուծելիս ցուցաբերել միատեսակ մոտեցումներ և միաժամանակ ցույց է տալիս, որ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին ու ազատություններին վերաբերող օրենքները պետք է համապատասխանեն օրենքի առջև հավասարության սկզբունքի բովանդակությանն ու իմաստին<sup>3</sup>:
30. Օրենքի առջև հավասարության սկզբունքին հակասում է խտրականության ցանկացած դրսևորում: Օրենքի առջև բոլորի հավասարության և խտրական վերաբերմունքի արգելման պահանջը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներից:
31. ԵԽՆ Նախարարների կոմիտեի «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» թիվ (2003)22 հանձնարարականով ընդգծվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի դերը կրկնահանցագործությունների կանխման և դատապարտված անձանց հասարակություն վերաինտեգրման գործում<sup>4</sup>:
32. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը սահմանում է, որ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը իրավական կարգավորման է

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, 2010թ.

<http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>

<sup>4</sup> Տե՛ս ԵԽՆ Նախարարների կոմիտեի թիվ (2003)22 հանձնարարականը «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին»

[https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec\(2003\)22&Language=lanEnglish&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(2003)22&Language=lanEnglish&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)





ենթարկվում ՀՀ քրեական, քրեական դատավարության, քրեակատարողական օրենսգրքերով, ինչպես նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերով:

33. ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ հաստատվել է «Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը» (հետայսու՝ Կարգ), որով սահմանվում են որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգն ու պայմանները, այդ նպատակով վարչական հանձնաժողով ստեղծելը, դրա կազմն ու գործունեությունը, ինչպես նաև դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման ընթացակարգը:
34. Հիշյալ որոշման համաձայն՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման գործընթացն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ հանձնաժողովային կարգով: Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը վարչական հանձնաժողովին է ներկայացվում՝ հաշվի առնելով դատապարտյալի անձնական գործը, ներառյալ դատապարտյալի բնութագիրը:
35. Համաձայն նշված Կարգի 10-րդ կետի «ա» ենթակետի՝ վարչական հանձնաժողովն ընդունում է (...) դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու (...) մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ որոշում՝ համաձայն Կարգի թիվ 1 ձևի: Վարչական հանձնաժողովի որոշումը պարունակում է տեղեկություններ դատապարտյալին մեղսագրված արարքի, պատժաչափի, քրեակատարողական հիմնարկ նրա տեղափոխման ամսաթվի, անձը բնութագրող այլ հանգամանքների մասին: Ի թիվս նշված տվյալների որոշման մեջ արձանագրվում է անձի ***ռիսկայնությունը*** և ուղղված լինելու հանգամանքը: Ռիսկայնության չափանիշը հանդիսանում է պատժից պայմանական ազատման ներկայացնելու նախապայմաններից մեկը:
36. 2008 թ. մայիսի 30-ին ՀՀ արդարադատության նախարարի թիվ 44 հրամանով հաստատվել է «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» Կարգը (հետայսու՝ Կարգ), որով սահմանվում է քրեակատարողական ծառայության մարմիններում և հիմնարկներում կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կազմակերպումը, իրականացումը և վերահսկողությունը:



37. 2008 թ. սեպտեմբերի 29-ին նշված Կարգը լրացվեց նոր՝ 12-րդ գլխով «Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների առանձնահատկությունները կալանավորված անձանց և դատապարտյալներին ռիսկային հաշվառման վերցնելիս և հաշվառումից հանելիս»:
38. Հիշյալ Կարգի 12-րդ գլխի 66-րդ կետով տրվում է ռիսկային համարվող դատապարտյալների բնորոշումը, որի համաձայն՝ ռիսկային են համարվում այն դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշումներ և պատիժը կրելուց հետո կարող են վտանգավոր լինել հանրության համար:
39. Նույն Կարգի 68-րդ կետի համաձայն՝ (...) դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա են (...) թմրամիջոցների (...) հակումներից մեկը: 68-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ (...) թմրանյութերի նկատմամբ հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝ դատավճռով տրված բժշկական եզրակացությունը (...): Կարգի 68-րդ կետի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռիսկային համարվող խմբի մեջ են ներառված թմրամիջոցներ գործածող անձինք:
40. Նախևառաջ պետք է փաստել, որ Կարգում գործածվող «թմրամիջոցների (...) հակում» եզրույթը ունի լայն ձևակերպում՝ առանց հաշվի առնելու առանձին տիպի թմրամիջոցների ազդեցության մեխանիզմը և դեղագիտական նշանակությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ դատապարտյալների շրջանում առկա են անհիմք, ովքեր ներառված են «Մեթադոնային փոխարինող բուժման» ծրագրի մեջ:
41. Վերոնշյալից ակներև է, որ մեթադոնային բուժում ստացող դատապարտյալների նկատմամբ կարող է խտրական վերաբերմունք ցուցաբերվել: Ռիսկային խմբում ընդգրկելով մեթադոնային բուժում ստացող անձանց խտրական մոտեցում է ցուցաբերվում վերջիններիս նկատմամբ՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս:
42. Խտրական մոտեցման հիմք է հանդիսանում մեթադոնը որպես ոչ թե դեղամիջոց, այլ որպես թմրանյութ դիտարկելը: Անտեսվում են մի շարք կարևոր հատկանիշներ, որոնց համաձայն «մեթադոնը» առանձնացնում են թմրամիջոց համարվող այլ ամփոփանախաղ նյութերից: Բացի այդ նման մոտեցումը մեթադոնային բուժում ստացող անձանց հանդեպ հակասում է թմրամիջոց գործածող անձանց հանդեպ ոչ պատժողական քաղաքականության սկզբունքներին՝ փաստացի բուժման ուղին որդեգրած անձինք պատժվում են, այլ ոչ թե խրախուսվում:
43. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանն անձի վրա կարող է դնել նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված պարտականությունները, որոնք անձը պետք է կատարի պատժի չկրած մասի ընթացքում: Այսինքն անձին պատժից պայմանականորեն ազատելով նա չի հայտնվում բացարձակ ազատության մեջ, ի վերջո նրա նկատմամբ սահմանվում



վերահսկողություն և նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ: Տվյալ դեպքում անձը ստանում է մեթադոնային բուժում և որպես ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ մասով նախատեսված գործողություններ կատարելու անբարենպաստ հետևանքների շարքում՝ պատժի չկրած մասի ի կատար ածում, կարող է սահմանվել նաև մեթադոնային բուժման դադարեցումը:

### 3. Եզրակացություն

44. Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, անհրաժեշտ է ՀՀ ԱՆ 30 մայիսի 2008թ. թիվ 44 հրամանով հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» Կարգում կատարել փոփոխություններ, որով ռիսկային համարվող խմբի մեջ չեն ներառվի մեթադոնային բուժում ստացող դատապարտյալները:

45. Առաջարկվում է.

ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. մայիսի 30-ի թիվ 44 հրամանով հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական եվ իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» Կարգի 68-րդ կետը «Թմրամիջոցների» բառից հետո լրացնել «բացառությամբ մեթադոնային բուժում ստացող անձանց» արտահայտությամբ և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«68. (...) դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա են փախուստի, ինքնավնասման, ալկոհոլի, թմրամիջոցների (բացառությամբ մեթադոնային բուժում ստացող անձանց), ագրեսիվության և կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների հակումներից մեկը. »*